



Դանիել Վարուժան

Արտերուն հրաւերը

Գիղականերէն հորիզոնները մինչեւ
Կը տարածուի մեր մայրութիւնը հողի:
Գարունն եկա՛ւ. – չի բաւեր ձիւնը թեթեւ
Ա՛յ ծածկելու մեր մերկութիւնը յըղի:

Վերադարձէք մեր ծոցը, ո՛վ մըշակներ,
Առաւօտներն արդէն Ապրիլ կը բուրեն.
Մառէն լուծուած կը կարկաչեն առուակներ.
Մեր տաք կողէն ծլաւ նարգիսը արդէն:

Մեզի եկէք. – ձեր սերնով լի բուտերուն
Մենք կը սպասենք կիներու լուռ ըղձանքով.
Ճաճանչն արդէն խրուեցաւ մեր սիրտերուն:

Պիտի լեցուին քրրտինքներու համրանքով
Հասկերը շէկ, ու պիտի ո՛րքան բերկրինք,
Երբ առջի հեղ խոփը ճըմլէ մեր ըստինք: